

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/73**

ք. Երևան

« 12 » « 05 » 2026 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի բակերի բարեկարգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է համաձայն հավելված 2-ի:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝



3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:



Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառունի հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուն նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառունի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **42 756 000 (քառասուններկու միլիոն յոթ հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V = U \cdot K$, որտեղ՝

U-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է):

K-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է:

K-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ:

V-ն ծավալաբեր-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի **0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով**:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի **0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով**: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չափապահման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները:

N	Խախտումը	Պատասխանատվությունը
---	----------	---------------------





1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարել	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5% չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5% չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5% չափով
4	Շինարարների համագգեստի վրա՝ շինարարություն իրականացնող կազմակերպության տարբերանշանի բացակայություն	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5% չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ,

Handwritten signature



քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է **Երևանի քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը**:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը



գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասը աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Գեղցնի 9
Բանկ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150010165485449
ՀՎՀՀ 01012067

Վ. Պապիկյան

(ստորագրություն)
Վ.Տ



Վ. Հարությունյան

(ստորագրություն)
Վ.Տ



Handwritten signature

Handwritten signature

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՉԱՓԱՐԱԺԻՆ-1

Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 11-րդ փողոցի 7-րդ շենքի բակի բարեկարգման աշխատանքներ

NN	Աշխատանքների անվանումը	Հախման միավոր	Ծավալ	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
				Цена единицы հազ. դրամ тыс. Драм	Всего հազ. դրամ тыс. Драм
1	2	3	4	5	6
	Քանդման աշխատանքներ Демонтажные работы				
1	Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/ Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/	զմ м	381.8	1.41	536.503
2	Նստարանների և աղբամանի ապամոնտաժում Демонтаж скамейки и мусорного бака	հատ шт	7	2.39	16.734
3	Ասֆալտբետոնե շերտի քանդում Снос асфальтобетонного слоя	մ ³ м3	13.35	5.79	77.319
4	Հանքաձյուղով տոգորված խճալին ծածկույթների քանդում Снос гравийных покрытий с минеральной пропиткой	մ ³ м3	32.04	0.96	30.830
5	Գոյություն ունեցող խաղասարքերի և մարզասարքի ապամոնտաժում Демонтаж существующего игрового оборудования и тренажеров	տ шт	0.85	68.54	58.260
6	Գրունտի մշակում մեխանիզմով կողիցք Боковая загрузка с механизмом обработки почвы	մ ³ м3	30.96	0.49	15.098
7	Գրունտի մշակում ձեռքով Обработка почвы вручную	մ ³ м3	3.44	2.38	8.185
8	Շին. աղբի հավաքում, բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 13կմ Шин. вывоз мусора, погрузка на самосвалы и транспорт 13 км	տ шт	358.13	4.90	1754.048
	Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу				2496.976
	Կշիռ (%) Процент (%)				17.56%
	Կառուցողական աշխատանքներ Строительные работы				
	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով-բետոնե հիմքով Установка бетонных бордюров размерами 200x80 мм – бетонное основание				
1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ Выполнение подготовительного слоя глины толщиной 5 см.	մ ³ м3	1.623	10.81	17.551
2	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով-բետոնե հիմքով Установка бетонных бордюров размерами 200x80 мм – бетонное основание	զմ м	162.3	6.31	1024.133
	Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу				1041.684
	Կշիռ (%) Процент (%)				7.33%
	Բետոնե եզրաքարերի տեղադրում 150*300մմ-բետոնե հիմքով Установка бетонных бордюров с бетонным основанием 150*300 мм.				
1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ Выполнение подготовительного слоя глины толщиной 7 см.	մ ³ м3	4.26	10.81	46.067
2	Բետոնե եզրաքարերի տեղադրում 150*300մմ-բետոնե հիմքով Установка бетонных бордюров с бетонным основанием 150*300 мм.	զմ м	219.5	8.38	1838.896
	Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу				1884.963
	Կշիռ (%) Процент (%)				13.26%
	Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում-գունավոր Монтаж бетонной плитки (томет) - цветной				
1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ Выполнение подготовительного слоя глины толщиной 5 см.	մ ³ м3	3.460	10.81	37.416
2	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստությ. չոր ց/ա շաղախով	մ ³ м3	2.77	21.27	58.914

Handwritten signature

Handwritten signature

	Выравнивающий слой под бетонные плиты толщиной 4 см сухим раствором				
3	Սալիկապատում բետոնե սալիկներով Бетонирование плиткой Мощение бетонной плиткой толщина 6 см	մ ² м ²	69.2	7.92	547.841
	Ընդամենը տվյալ բաժնով				644.172
	Կշիռ (%)				4.53%
	Процент (%)				
	Այլ աշխատանքներ				
	Другие работы				
1	Ցայտադրյալի տեղի բետոնացում B15 դասի բետոնով Бетонирование площадки фонтана бетоном марки B15.	մ ³ м ³	0.80	56.06	44.852
2	Հարթակի երեսապատում բազալտե սալերով, 30մմ հաստ., /առանց ծակոտկեն/ Покрытие пола базальтовыми плитами толщиной 30 мм /без перфорации/	մ ² м ²	3.0	15.49	46.456
3	Նոր նստարանների ձեռք բերում և տեղադրում /դնել նոր նստարանները հիմքով ու փոշեներկումով/ Приобретение и установка новых скамеек.	հատ шт	6	51.32	307.891
4	Նոր մետաղյա աղբամանների տեղադրում/դնել նոր աղբամանները հիմքով ու փոշեներկումով/ Установка новых металлических мусорных баков/установка новых мусорных баков с фундаментом и порошковой покраской/	հատ шт	5	23.46	117.292
5	Աստիճանների երեսապատում բազալտե սալերով, 30մմ հաստ., եզրագծի մեկ կողմից աղեղային հղկումով/առանց ծակոտկեն/ Облицовка лестницы базальтовыми плитами толщиной 30 мм, с дуговой шлифовкой с одной стороны бордюра/без перфорации/	մ ² м ²	2	15.49	30.197
6	Աստիճանների դիմային մասերի երեսապատում բազալտե սալերով, 30մմ հաստ./առանց ծակոտկեն/ Облицовка фасадных частей лестницы базальтовыми плитами толщиной 30 мм./непористая/	մ ² м ²	0.68	30.56	20.779
7	Հենապատերի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստ./առանց ծակոտկեն/ Облицовка подпорных стен базальтовыми плитами толщиной 30 мм./непористая/	մ ² м ²	26.80	32.11	860.675
8	Բազալտե վրադիր քարերի տեղադրում 30մմ b=350մմ /առանց ծակոտկեն/ Монтаж базальтового облицовочного камня 30мм b=350мм /без перфорации/	մ ² м ²	6.20	43.12	267.366
9	Բուսահողի բերում և փռում ձեռքով կանաչ տարածքներում 70մմ և կարմիր ավազի խարնուրդի ավելացումով 30մմ Внесение и разбрасывание грунта вручную на зеленых участках 70 мм и с добавлением красной песчаной смеси 30 мм.	մ ² м ²	230	2.49	573.472
10	Մարզասարքերի և խաղասարքերի վերատեղադրում Переустановка спортивного инвентаря и игрового оборудования	տ тн	0.850	113.56	96.529
11	Վերատեղադրվող մարզասարքերի և խաղասարքերի հիմքերի բետոնացում B15 դասի բետոնով/Бетонирование фундаментов многоразового спортивного инвентаря и игрового оборудования бетоном класса B15.	մ ³ м ³	1.25	65.13	81.410
12	մարզասարքերի և խաղասարքերի յուղաներկում покраска маслом спортивного инвентаря и игрового оборудования	տ тн	0.85	22.13	18.807
	Ընդամենը տվյալ բաժնով				2465.725
	Կշիռ (%)				17.34%
	Процент (%)				
	Ասֆալտբետոնյա աշխատանքներ				
	Асфальтобетонные работы				
1	Խճային հիմք H=12սմ Гравийное основание H=12см	մ ² м ²	450.8	1.48	668.315
2	Բիտումի լցում խճի վրա 450.8 մ ² (4.12տ/1000մ ²) Засыпка битума по гравию 450,8 м ² (4,12т/1000м ²)	տ тн	1.857	258.02	479.146
3	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 5սմ հաստությամբ Выполнение мелкозернистого асфальтобетонного покрытия толщиной 5 см.	մ ² м ²	450.8	4.98	2243.433
	Ընդամենը տվյալ բաժնով				3390.894
	Կշիռ (%)				23.85%
	Процент (%)				
	Նախապատրաստված ռետինե ծածկույթի իրականացում				
	Выполнение резинового покрытия на детской площадке				
1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստությամբ Подготовительный слой из базальтового щебня	մ ³ м ³	9.40	10.80	101.500
2	Ե/ր նախաշերտի պատրաստում B12.5 դասի բետոնից Выполнение железобетонного предварительного слоя	մ ³ м ³	4.70	42.99	202.062
3	Ամրանացանցի տեղադրում Փ4ВрI ամրանից Монтаж арматурной сети	տ тн	0.1786	27.22	4.862

Handwritten signature

Handwritten signature

4	Ամրանացնց Փ4Bpl, p. 150x150մմ арматурной сети	մ ² _{ա2}	94.0	0.76	71.252
5	Միաձուլ ռետինե ծածկույթի իրականացում 15մմ հաստ. Монолитное резиновое покрытие толщиной 15 мм	մ ² _{ա2}	94.0	14.82	1393.166
	Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу				1772.841
	Կշիռ (%) Процент (%)				12.47%
	Ցայտադրյալի պատրաստման, տեղադրման աշխատանքներ Подготовка фонтана				
1	Ցայտադրյալի տեղի բետոնացում B15 դասի բետոնով Бетонирование площадки фонтана	մ ³ _{ա3}	0.80	56.06	44.852
2	Հարթակի երեսպատում բազալտե սալերով, 30մմ հաստ., /առանց ծակոտկոն/ Облицовка площадки базальтовыми плитами толщиной 30 мм	մ ²	4.0	15.49	61.942
3	Ցայտադրյալի պատրաստում և տեղադրում մշակված բազալտե քարից Подготовка фонтана	հատ шт	1	151.10	151.104
4	Ամրան Փ14A500с Арматура Ф14A500с	տ тн	0.00136	390.97	0.532
5	Պող. քիթեղ 200x200x2մմ Стальной лист	մ ² _{ա2}	0.04	9.03	0.361
6	Ցինկապատ բասակ Փ200մմ, h=100մմ Оцинкованный колпачок	հատ шт	1	7.33	7.331
7	Ցայտիչի տեղադրում Փ15մմ Более легкая установка	հատ шт	2	2.93	5.865
8	Ավազի նախապատրաստական և պաշտպանիչ շերտերի իրականացում Выполнение подготовительного и защитного слоя песка	մ ³ _{ա3}	8.93	6.07	54.186
9	Հավաքովի ե/ք դիտահորի կառուցում Подготовка сборного железобетонного колодца	մ ³ _{ա3}	0.14	77.55	10.857
10	Բետոնե նախապատրաստական շերտ Бетонный подготовительный слой	մ ³ _{ա3}	0.12	42.75	5.130
11	Թեթև խիճ/Легкий гравий	մ ³ _{ա3}	1.30	11.29	14.672
12	Մետաղական դռնակ Металлическая дверь	տ тн	0.015	631.32	9.470
13	Ռետին Ластик:	զմ м	3.0	0.22	0.660
14	Ծխնի Петля:	հատ шт	2	0.81	1.613
15	Փական Замок:	հատ шт	1	1.61	1.607
16	Ջերմամեկուսիչ սալ (երկտալի 30x3 L=400մմ-2հատ, 30x3 L=590մմ -4 հատ պլաստմաս, 30x 3 L=490մմ 8հատ պլաստմաս, խարխուխ-4հատ, փրփրապլաստ h=100մմ -1հատ, հեղյուս L=140մմ, Փ 8-հատ) Теплоизоляционная плита	կոմպ набор:	1	11.73	11.729
17	Ջերմամեկուսիչ նյութ Теплоизоляционный материал	զմ м	1.5	0.62	0.924
18	Շին. սիլիկոն Силикон	հատ шт	1	1.76	1.759
19	Մետաղական դռնակի յուղաներկում Покраска металла двери маслом	մ ² _{ա2}	3.00	0.89	2.663
20	Պոլիպրոպիլենային լայնուկավոր խողովակների մոնտաժում de63 (կոյուղու) Монтаж полипропиленовых труб	զմ м	17.5	1.36	23.821
21	Պոլիպրոպիլենային եռակցվող խողովակների մոնտաժում de15, PN=1.0ՄՊա (խմելու ջրի) Монтаж полипропиленовых труб	զմ м	60.0	0.90	53.951
22	Պլաստմասե պատյան խողովակ DN32 Пластиковая трубка в оболочке	զմ м	24.0	1.67	40.096
23	Մետաղե գնդային փական DN15 Металлический шаровой кран	հատ шт	1	5.23	5.228
24	Պոլիէթիլեն (PE) de15 խողովակների լվացում, ախտահանում/Промывка полиэтиленовых труб	կմկմ:	0.1015	102.28	10.382
	Ընդամենը Итого				520.733
	Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				3.66%
	Ընդհանուրը Итого				100.00%
	Ընդամենը Итого				14217.988
	ԱԱՀ, 20% НДС, 20%				2843.598
	Ընդամենը Итого				17061.586

Handwritten signature



ՀԱՓԱՐԱԺԻՆ-2

Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 11-րդ փողոցի 10-րդ շենքի բակի բարեկարգման աշխատանքներ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Սկզբնական քանակություն	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
				Цена единицы հազ. դրամ тыс. Драм	Всего հազ. դրամ тыс. Драм
1	2	3	4	5	6
	Բանդման աշխատանքներ Демонтажные работы				
1	Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/ Демонтаж бетонного бордюра /бетонного фундамента/	զմ м	528.0	1.41	741.943
2	Նստարանների և աղբամանի ապամոնտաժում Демонтаж скамейки и мусорного бака	հատ шт	10	2.39	23.906
3	Ասֆալտբետոնե շերտի քանդում Снос асфальтобетонного слоя	մ ³ м3	12.85	5.79	74.423
4	Հանքաձյուղով տոգորված խճային ծածկույթների քանդում Снос гравийных покрытий с минеральной пропиткой	մ ³ м3	30.84	0.96	29.675
5	Գոյություն ունեցող խաղասարքերի և մարզասարքի ապամոնտաժում Демонтаж существующего игрового оборудования и тренажеров	տ тн	0.85	68.54	58.260
6	Գրունտի մշակում մեխանիզմով կողիցք Боковая загрузка с механизмом обработки почвы	մ ³ м3	42.75	0.49	20.847
7	Գրունտի մշակում ձեռքով Обработка почвы вручную	մ ³ м3	4.75	2.38	11.301
8	Շին. աղբի հավաքում, բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 13կմ Шин. вывоз мусора, погрузка на самосвалы и транспорт 13 км	տ тн	375.2	4.90	1837.654
	Ընդամենը Итого				2798.009
	Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				17.63%
	Կառուցողական աշխատանքներ Строительные работы				
	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով-բետոնե հիմքով Установка бетонных бордюров размерами 200x80 мм – бетонное основание				
1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ Выполнение подготовительного слоя глины толщиной 5 см.	մ ³ м3	2.080	10.81	22.493
2	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով-բետոնե հիմքով Установка бетонных бордюров размерами 200x80 мм – бетонное основание	զմ м	208.0	6.31	1312.506
	Ընդամենը Итого				1334.999
	Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				8.41%
	Բետոնե եզրաքարերի տեղադրում 150*300մմ-բետոնե հիմքով Установка бетонных бордюров с бетонным основанием 150*300 мм.				
1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ Выполнение подготовительного слоя глины толщиной 7 см.	մ ³ м3	6.21	10.81	67.154
2	Բետոնե եզրաքարերի տեղադրում 150*300մմ-բետոնե հիմքով Установка бетонных бордюров с бетонным основанием 150*300 мм.	զմ м	320.0	8.38	2680.850
	Ընդամենը Итого				2748.004
	Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				17.32%
	Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում-գունավոր Монтаж бетонной плитки (томет) - цветной				
1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ Выполнение подготовительного слоя глины толщиной 5 см.	մ ³ м3	8.350	10.81	90.296
2	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստությ. չոր g/ա շաղախով Выравнивающий слой под бетонные плиты толщиной 4 см сухим раствором	մ ³ м3	6.68	21.27	142.075
3	Սալիկապատում բետոնե սալիկներով Мощение бетонной плиткой толщина 6 см	մ ² м2	167.0	7.92	1322.103

Handwritten signature

Handwritten signature

	Ընդամենը	Итого				1554.474
	Տոկոսը ամբողջի համեմատ	Процент по сравнению с целым				9.80%
	Այլ աշխատանքներ	Другие работы				
1	Ցայտադրյալի տեղի բետոնացում B15 դասի բետոնով	Бетонирование площадки фонтана бетоном марки B15.	մ ³	0.80	56.06	44.852
2	Հարթակի երեսպատում բազալտե սալերով, 30մմ հաստ., /առանց ծակոտկոն/	Покрытие пола базальтовыми плитами толщиной 30 мм /без перфорации/	մ ²	3.0	15.49	46.456
3	Նոր նստարանների ձեռք բերում և տեղադրում /ղնեղ նոր նստարանները հիմքով ու փռչեղներով/	Приобретение и установка новых скамеек.	հատ шт	9	51.32	461.836
4	Նոր մետաղյա աղբամանների տեղադրում/ղնեղ նոր աղբամանները հիմքով ու փռչեղներով/	Установка новых металлических мусорных баков/установка новых мусорных баков с фундаментом и порошковой покраской/	հատ шт	5	23.46	117.292
5	Նոր խաղասարքի ձեռք բերում և տեղադրում-համաձայնեցնել պատվիրատուի հետ/	Покупка и установка новой игрушки - согласовывать с заказчиком/	հատ	2	1114.27	2228.544
6	Բուսահողի բերում և փռում ձեռքով կանաչ տարածքներում 70մմ և կարմիր ավազի խարնուրդի ավելացումով 30մմ	Внесение и разбрасывание грунта вручную на зеленых участках 70 мм и с добавлением красной песчаной смеси 30 мм.	մ ²	230	2.49	573.472
7	Մարզասարքերի և խաղասարքերի վերատեղադրում	Переустановка спортивного инвентаря и игрового оборудования	տ шт	0.850	113.56	96.529
8	Վերատեղադրվող մարզասարքերի և խաղասարքերի հիմքերի բետոնացում B15 դասի բետոնով	Бетонирование фундаментов многоразового спортивного инвентаря и игрового оборудования бетоном класса B15.	մ ³	1.25	65.13	81.410
9	մարզասարքերի և խաղասարքերի յուղաներկում	покраска маслом спортивного инвентаря и игрового оборудования	տ шт	0.85	22.13	18.807
	Ընդամենը	Итого				3669.198
	Տոկոսը ամբողջի համեմատ	Процент по сравнению с целым				23.12%
	Ասֆալտբետոնյա աշխատանքներ	Асфальтобетонные работы				
1	Խճային հիմք H=12սմ	Гравийное основание H=12см	մ ²	257.0	1.48	381.005
2	Բիտումի լցում խճի վրա 257 մ2 (4.12տ/1000մ2)	Засыпка битума по гравию 257 м2 (4,12т/1000м2)	տ шт	1.059	258.02	273.245
3	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 5սմ հաստությամբ	Выполнение мелкозернистого асфальтобетонного покрытия толщиной 5 см.	մ ²	257	4.98	1278.976
	Ընդամենը	Итого				1933.225
	Տոկոսը ամբողջի համեմատ	Процент по сравнению с целым				12.18%
	Խաղահրապարակում ռետինե ծածկույթի իրականացում	Выполнение резинового покрытия на детской площадке				
1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստությամբ	Подготовительный слой из базальтового щебня	մ ³	9.70	10.80	104.739
